

DOCUMENT 1



*Բա՛րև! Ողջու՛յն!
 Buon giorno ! Buenos dias !
 ...
 ...*

Ֆրանսերենն աշխարհում

Ներկայումս մեր մուրրակը հաշվվում է մոտ 6 միլիարդ բնակիչություն, որն ապրում է աշխարհի 200 երկրներում և պետություններում: Այս երկրների բնակիչները խոսում են տարբեր լեզուներով: Գոյություն ունեն հարյուրավոր լեզուներ, որոնք գործածվում են մի քանի հազար բնակչության կողմից: Անգլերենը միջազգային առևտրում ամենատարածված լեզուն է, սակայն չինարենը ամենից շատ խոսվողն է: Աշխարհում ավելի քան 200 միլիոն մարդ առօրյա կյանքում խոսում է ֆրանսերեն լեզվով, 60 միլիոնը՝ Ֆրանսիայում, իսկ մնացածը՝ այլ երկրներում: Բելգիայում, Շվեյցարիայում, Կանադայում և Աֆրիկայի որոշ երկրներում:

Ֆրանսիական դպրոցը

Ֆրանսիայում դպրոցը պարտադիր է մինչև 16 տարեկան: Երեխաները նախևառաջ հաճախում են տարրական դպրոց, այնուհետև՝ քոլեջ և վերջում՝ լիցեյ: Մանկապարտեզը, որն երեխաներին ընդունում է 6 տարեկանից ցածրերին, պարտադիր չէ, սակայն նախապատրաստում է տարրական դպրոցին և խորհուրդ է տրվում ծնողներին արձանագրել իրենց երեխաներին: Տարրական դպրոցում ձեռք են բերում հիմնական գիտելիքներ մեծահասակների աշխարհը մուտք գործելու համար, գրել, կարդալ և հաշվել, նաև՝ տիրապետել որևէ օտար լեզվի, կողմնորոշվել ինֆորմատիկայում և այլ բնագավառներում: Ահա թե ինչու է պահանջվում լինել ժրջան և ճշտապահ: Երբ աշակերտը բացակայում է դասից, հարկավոր է ներկայացնել ծնողների բացատրությունը:

Յուրաքանչյուր դպրոցում միմյանց հաջորդող 5 դասարան կա, որը համապատասխանում է կրթական 5 մակարդակների: Ահա 8 տարեկան երեխայի դասացուցակի մի օրինակ.

	Երկուշաբթի	Երեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
08-30	Ֆրանսերեն	Ֆրանսերեն	Ֆրանսերեն	Ֆրանսերեն
10-00	Մաթեմատիկա	Մաթեմատիկա	Մաթեմատիկա	Մաթեմատիկա
10-20	<i>Դ Ա Ս Ա Մ Ի Զ Ո Ց</i>			
	Մաթեմատիկա	Մաթեմատիկա	Մաթեմատիկա	Մաթեմատիկա
11-30	Ընթերցանություն	Ընթերցանություն		
01-30	Ճ Ա Շ Ի Ժ Ա Մ			
	Ընթերցանություն	Ճշգրիտ գիտություններ	Ճշգրիտ գիտություններ	Պատմություն
03-00	Աշխարհագրություն	Ծրագրավորում		Ընթերցանություն
03-20	<i>Դ Ա Ս Ա Մ Ի Զ Ո Ց</i>		Լող	<i>Դ Ա Ս Ա Մ Ի Զ Ո Ց</i>
04-30	Երաժշտություն	Գերպարվեստ		Մամուլ

Պահանջվող իրեր և հագուստներ :
 - Լող. լողագգեստ, լողի գլխարկ, սրբիչ:
 - Ֆիզկուլտուրա. կարճ տաբատ, սպորտային կոշիկներ, շապիկ:
 - Ճաշարան. սրբիչ և ատամի խոզանակ :



Պատասխանիր հետևյալ հարցերին՝ շրջանագծելով ճիշտ պատասխանը

① Ո՞րն է աշխարհում ամենից շատ խոսվող լեզուն:

Ֆրանսերենը

Անգլերենը

Չինարենը

② Արդյո՞ք ֆրանսերեն խոսում են միայն Ֆրանսիայում:

Այո

Ոչ

③ Արդյո՞ք Ֆրանսիայում դպրոցը պարտադիր է 4 տարեկան երեխայի համար:

Այո

Ոչ

$$\dots / 2 + \dots / 2 + \dots / 2 = \dots / 6$$

④ Ուսումնասիրիր դասացուցակը. որքա՞ն է սևում յուրորդանյութը դասամիջոց

40 բոպե

30 բոպե

20 բոպե

⑤ Շաբաթվա ո՞ր օրն քնթերցանություն չկա:

Երկուշաբթի

Երեքշաբթի

Հինգշաբթի

Ուրբաթ

⑥ Ո՞ր օրը երեխաները պետք է դպրոց տանեն իրենց լողագետսն ու սրբիչը

Երկուշաբթի

Երեքշաբթի

Հինգշաբթի

Ուրբաթ

$$\dots / 2 + \dots / 2 + \dots / 2 = \dots / 6$$